

ՄԱՅԻՍ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարեկանը 6 ռուբլի.
Առանձին համարները 7 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմյանիս խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

ՏԵԼԵՓՈՆ № 253.

Խմբագրությունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տոն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լիզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
խրաբանչիւր բառին 2 կոպեկ.

ՏԵԼԵՓՈՆ № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Կարսի վաճառական Գրիգոր և իր ամուսին տիկին Նոյեմզար Սթրաշի-
կեաններ, ջառով օրտի յայտնելով իրանց ազգականներին և ծանօթներին իրանց
որդուն՝

Ա Ր Ա Մ Ս Թ Օ Ր Շ Ձ Ի Կ Ե Ա Ն Յ Ի

վաղահաս մահը, խնդրում են շնորհ բերել յուզարկաւորութեանը, որը տեղի կու-
նենայ բժ. Մարիոսեանցի հիւանդանոցից (վոզնեսենսկայա փողոց) ուրբաթ, ամսիս
17-ին, առաւօտեան 9-ին, դէպի Քամոյեանց եկեղեցին, Գօրջօփայա փողոցում,
և այնտեղից խօջովանքի գերեզմանատունը:

1—1.

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ

Բժիշկը դարձել է թունաւորող.—ՆԵՐՖԻՆ ՏԵ-
ՍՈՒԹԻՒՆ. Բարձրագոյն մանիֆէստ. Թաղաքու-
թեան տօնախմբութիւնը Թիֆլիսում. Նամակ
Ասիաբազից. Նամակ խմբագրութեան. Ներքին
լուրեր.—ԱՐՏԱՐԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. վերջին աւե-
ղեկութիւններ.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒ-
ԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Նամակներ Պարս-
կաստանից.

ԲԺԻՇԿԸ ԴԱՐՁԵԼ Է ԹՈՒՆԱՐՈՂ

«Բժիշկը դարձել է թունաւորող»,—բա-
ցականեց այս օրերս յայտնի Ֆրանսիացի
ղիտական Ժիւլ Սիմոն, խօսելով Ֆրանսիա-
յի ժամանակակից մամուլի նշանակութեան
և վիճակի մասին: Մամուլը, շարունակեց
նա, պրօպագանդայի գործիքն է դարձել և
բնկավոր գործիք:

Եւ այդ առիթով Ժիւլ Սիմոն մի պատ-
մական տեսութիւն է անում, թէ ինչպէս
այն մամուլը, որ առաջ ղեկավարում էր
հասարակական կարծիքը, որ առաջ միայն
մի նպատակ ունէր—առաջնորդել հասա-
րակութիւնը դէպի բարոյական, մտաւոր,
կրօնական և քաղաքական վերածնութիւն,
այսօր, այդ նոյն մամուլը դարձել է մի

առեւտրական հաստատութիւն, մի օրդան,
որը ոչ թէ ղեկավարում է հասարակական
կարծիքը, այլ ինքը յարմարվում է այդ
կարծիքին, ոչ թէ պատժում է, այլ շողո-
քորթում է, փայտայում է հասարակութեան
ստոր ինտինկտները և հակումները: Եւ
այդ առաջ եկաւ նրանից, բացառում է
Ժիւլ Սիմոն, որ մի քանի հրապարակա-
խօսների մէջ միտք յղացաւ լրագրական
գործը դնել վաճառականական հիմքի վրա,
մամուլը դարձնել առեւտրական ձեռնարկու-
թիւն և նրա աջողութեան ու զարգացման
հիմք ընդունելը բնական է: Բնական է նաեւ
պարանափոխեց մամուլը և հասցրեց նրան
այն բարոյական անկման, որի մէջ նա դը-
ռնվում է այսօր, և շատ դժուար է կոր-
ծանել այդ վարակիչ հոսանքը, որն իր
ծանրութեան ներքոյ թաղում է հասարա-
կական և սոցիալական ամենալաւ ձգտում-
ները և նպատակները: Ֆրանսիայի հոգեւոր
և բարոյական այլաճեղանք:

Եւ իրա պատճառները շատ պարզ են:
Այժմեան լրագրիւնները ահապահ ծախսեր
ունեն. բացի հրատարակութիւնից, նրանք
ստիպւած են գոհացնել ընթերցողների
ցանկութիւնը, որոնք պահանջում են տալ
իրանց ամենաթաքն լուրերը աշխարհի ա-
մեն անկիւններից. այդ ընթերցողները պա-

հանջում են մի և նոյն ժամանակ, որ ի-
րանց տան կարգաւոր ամենահաշակաւոր
գիտականների և գործնական աշխատու-
թիւնների: Եւ այդ ցանկութիւններին գո-
հացում տալու համար հրէշաւոր ծախսեր
պէտք է անել: Բայց բաժանորդագրութիւ-
նը անկարող է ծածկել այդ ծախսերը: Այդ
ծախսերը կարելի է ծածկել միայն յայտա-
րարութիւններով: Բայց յայտարարութիւն-
ները զրաւելու համար պէտք է լրագրիւն
շատ տարածված լինի, որովհետեւ յայտա-
րարութիւն անուրը ղեկավարվում է ոչ թէ
այն գաղափարներով, որ քարոզում է լրագրիւնը,
այլ նրանով, թէ որքան տարածված է այդ
լրագրիւնը: Պարզ է, որ այդպիսի լրագրիւնը,
եթէ կամենում է շատ յայտարարութիւններ
ստանալ, պէտք է յարմարվի ամբողջ ծա-
շակին և միայն այդ միջոցով նա կարող է
աջողութիւն գտնել: Իսկ յարմարվելով ամ-
բողի ծաշակին, շողոքորթելով նրան, լրա-
գրիւնը կորցնում է ղեկավարի, առաջնորդ-
ղի, քարոզչի, ուսուցչի, գաղափար տարա-
ծողի դերը և դառնում է սպասաւոր, ըստ-
րուկ ամենատար հակումների ու արտա-
յայտութիւնների: Եւ ամբողջ ծաշակն ու
կարծիքն է, որ ղեկավարում է նրան:

Տարակոյտ չը կայ, որ ինչպէս հասարա-
կութիւնն է ազդում մամուլի վրա, նոյն-
պէս էլ մամուլն է ազդում ու անբարոյա-
կանացուցիչ ներգործութիւն ունենում հա-
սարակութեան վրա: Եթէ Ֆրանսիայի ժա-
մանակակից հասարակական կեանքը այն-
քան դժուար է, այնքան բարոյապէս աղքատ
է և բուրժուազական ոգով ստեղծված, իրա
գլխաւոր պատճառներից մէկն էլ մամուլն
է, որ ամբողջովին համակված է բուր-
ժուազական և առեւտրական ոգով: Այդ
կեանքը վերանորոգելու համար պէտք է
վերանորոգել մամուլը. իսկ վերանորոգու-
թեան ամենագործող միջոցը, ասում է Ժիւլ
Սիմոն, ոչ թէ այն պատժական օրէնսդրու-

թիւններն են, որ քարոզում են շատերը,
այլ ինքն մամուլն է, որովհետեւ միայն մա-
մուլը կարող է վերատեսչել, նոր կենսւր,
նոր ոգի ներշնչել մամուլին, և այն հա-
մադրած լուրջ գործները, որոնց համար
թանգ է Ֆրանսիական ազգի հոգեւոր և
բարոյական վերածնութեան գործը:

Ֆրանսիական նշանաւոր գրողի այդ խօս-
քերը լաւ դաս և խրատ կարող են լինել
և հայոց անբարոյականացած, փողոցային
լրագրիւնների համար, որոնք այնքան վայր
գցեցին հայոց մամուլի պատիւը ժողովրդի
աչքում:

ՆԵՐՖԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՄԱՆԻՖԵՍՏ

(Հ. Ե. Կ. Գ. Բ.)

Բարձրագոյն մանիֆէստը գրաւում է 15 1/2 է-
րեններ: Նրա բովանդակութիւնը հետեւեալն է:
Ամենատարածաբար հրամայված է. շնորհել
թեթեւութիւններ պետական հողային հարկի,
գլխահարկի, քորօնի, ասված հարկերի և ան-
տառային հարկի վերաբերմամբ: Ներքի չը
վերցրած տուգանքները ուղղակի հարկերի վերա-
բերմամբ. տուգանքները մինչև 300 ր. առեւտրից
վերջով հարկերից, իսկ տուգանքները, որոնք վե-
րոյից աւել գումարից բարձր են, 300 ռուբլով
պակասեցնել. դրոշմատուրքի կանոնադրութիւնը
խախտելու համար եղած պահանջները ներքի մինչև
300 ր. իւրաքանչիւրը. 300 ռուբլուց բարձր պա-
հանջներից ներքի 300 ր., դանձաբանը իր ժամա-
նակ նպատակներ չը մտցնելու տուգանքը ներքի.
տուգանքները անկանոն դատեր սկսելու համար:
Ներքի թուղթները աւել վերցնելու համար եղած
պատիւները. ներքի այն վնասները, որ կրել է
դանձաբանը պաշտօնակալող եղած ղեկաւոր-
ներն, նրանց կանանց և աղբիւններին անհատ կերպով

բերան սքանչալիւմ ան ստորագրամի ձեռք ա-
ռած խիստ միջոցների և պետական մարդու-
արժանիքների վրա:

Մի քանի մանրամասնութիւններ ոճագործու-
թեան վերաբերեալ: Ոճագործը կնոյ գգեցործով չէ
եղած, ինչպէս կարծվում էր սկզբում, այլ պար-
զապէս ներկայանում է Դանիս որպէս մի աղբի-
ւոր: Առաջին նախարարը և ուրիշ պալատա-
կաններ, որոնք ընկերանում էին Դանիս, կամե-
նում են արդեւ լինել, տեղի անյարմարութիւ-
նը ի նկատի առնելով Դանիս, կարծելով որ շատ
ստիպողական մի գործ պէտք է լինի, որ աղբի-
ւորակոյն առիպել է այդպիսի մի քաղ ընտրել.
հրամայում է որ նրան թող տան առաջ դալ:
Ոճագործը ներկայացնելով աղբւրսագրիւն մէկ
ձեռքով միւսով հանում է զգեստի տակից բե-
ւոյվէրը և արձակում է: Մնացորդը արդէն գի-
տէր:

Այս մի քանի օրվայ ընթացքում եղած կողմ-
նակի մարդկանց հարց ու փորձերը դեռ ևս ոչ
մի բան չեն յայտնում: Ոճագործը յայտնում է,
որ ինքը վճարում էր Դանիս սպանելու և թէ մի
քանի ամսից ի վեր առիթ էր փնտռում շարու-
նակ հետապնդելու Դանիս. նա հաւատարմում է,
թէ որոշած էր, որ եթէ այս առիթն էլ անօ-
գուտ լինի, Դանիս քնդակահար անէ նոյն իսկ
այն գիշեր երբ, ըստ նախապէս որոշած ծրա-
գրի, Դանիս իր յօդակների գիշեր, պէտք է ոտ-
քով քալէր բաղադրների մէջ: Կարող էր երևա-
կայել, որ եթէ այդ բանը պատահած լինէր, ինչ
ստիպելով, անհաշուելի հետեւանքներ էր ունենա-
լու: Եթէ ամբողջ իր աչքով տեսնէր իր թագա-
ւորի անկումը նախ քան զգուշութեան միջոց-
ներ ձեռք առնված լինէին, մի այնպիսի ան-
նկարագրելի իրարանցում, աւարաւորութիւն և
ջարդ առաջ կը դար, որ երևակայել անհաւար է:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԱՄԱԿՆԵՐ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՅ

I

Թէ հ. Բ. ան, ապրիլի 22-ին

Այն ինչ մէկ ամսից ի վեր ամբողջ Պարսկաս-
տանը տանդալին կերպով զբաղված էր պատ-
րաստութիւններով՝ իր վեհապետի յիմնամեայ
յօդակները կատարելու համար, յանկարծ անակն-
կալ կերպով տեղի ունեցաւ այն սարսափելի
սպանութիւնը, որի մասին հեռագիրը պէտք է
ձեռ տեղեկութիւն տուած լինի: Անակնկալ մա-
նաւանդ այն պատճառով, որ Դանիս իր յօդակա-
նի առիթով արած կարգադրութիւններով՝ մաս-
նաւոր ժողովրդականութիւն էր շահած: Դրան-
ցից ամենից նշանաւորն է այն, որ Դանիս բոլոր
բովլին ջնջեց մի վրա զրկած տուրքը, և միան-
գամից անապին զեղծումների դուռը փակեց:

Ուրբաթ առաւօտ Դանիս մեկնեց Դանաբադ-
աղով կոչված ուխտատեղին, քաղաքից միայն
10 վերստ հեռաւորութեամբ, ուր սովոր էր տա-
րին մի քանի անգամ գնալ: Երբ Դանիս ուղևոր է
մտնել մզկիթը, սաղաղաւոր, զգուշութեան հա-
մար, հրամայում է, որ մզկիթի մէջ գտնվող
ուխտատեղին հեռացնեն. Դանիս արդեւ
գտնում, հրամայում, որ ոչ ոք չհանձնագտաց-
նեն, և ինքն էլ, միւս ուխտատեղիների պէս,
ներս է մտնում: Պէտք է նկատել, որ առհասա-
րակ Նասրէդդին Դանիս շատ մեծ վստահութիւն
ունէր իր ժողովրդի վրա, և երբեք ձեռք չէր առ-
նում այն նախազգուշական միջոցները, որոնց
եւրօպացի թագաւորները անհրաժեշտ են նկա-
տում: Այն ինչ Դանիս պատրաստվում էր իր ա-

ղօրքը կատարելու, ժամը 12-ի մօտ, նոյն իսկ
մզկիթի մէջ, մի այդ մարդ, կանացի հագուստ-
ներով, մի աղբւրսագիր ձեռքին, մօտենում է
Դանիս, և երբ Դանիս ուղևոր է աղբւրսագիրն առ-
նել, ոճագործը, զրպանից հանելով բեւոյվէրը,
սրտին նշան է անում, և առաջին ու միակ
հարուածով դեպի է տապալում Պարսկաստանի
վեհապետին:

Ոճագործը, Մերզա-Բիդա-Բիդանցի անունով,
իսկոյն և եթ ձեռքակալվում է: Արդեւ ուղևոր
է պատառ պատառ անել նրան: Առաջին նա-
խարարը ինքն ընկնելով նրա վրա՝ ազատում է
նրան, մտածելով, որ քննութիւնը կարող է մեծ
զաղարկներ և դաւադրութիւններ կայ բերել,
որոնք առանց դրան նորանոր չարիքներ կարող
են առաջացնել: Սաղաղաւոր, այդ մի և նոյն
մտքի ներկայութեամբ, որ նրան յատուկ է, իս-
կոյն Դանիս նստեցնելով կառքի մէջ, 11 օրվայ
ընթացքում կտրում է այդ հեռաւորութիւնը, և
հասնում է նրան քաղաք, ամբողջ ժամանակ իր
թիկ վրա պահելով իր վեհապետին: Բժշկական
ամեն օգնութիւն անօգուտ էր արդէն: Բայց
հարկաւոր էր քաղաքի խաղաղութեան վրա մտա-
ծել: Եւրօպական վարչութեան տակ սպրդող մար-
դը զաղաղաւոր անգամ չունի, թէ վեհապետի մա-
նը մայրաքաղաքին և նոյն իսկ ամբողջ երկրի
մէջ ինչ խռովութիւններ և յեղափոխութիւններ
կարող է յարուցանել: Սակայն, շնորհիւ սաղա-
ղաւոր մեծ հեռաւորութեան և ձեռք առած
խիստ միջոցների, քաղաքի հանդարտութիւնը
կատարեալ է: Յաջորդութեան խնդիրը և զահա-
ժառանգի ժամանումը ապահոված է:

Ոճի շարժառիթը յայտնի չէ. շատ հաւանա-
կան է, որ մի անձնակալ վրէժ լինի. բայց աչ-
քի առաջ ունենալով ոճագործի նախապէս ու-
նեցած կապերը, կարծվում է, որ արտաքին մի-

ջորդումով է գործել: Ոճագործը, իրան նշանա-
կութիւն տալու համար, խօսում է յանուն աղա-
տութեան և աշխ. բայց ակնեւն է, որ շարժա-
ռիթը անձնական է:

Քննութեան արդիւնքը կը գրեն:

II

Թէ հ. Բ. ան, ապրիլի 25-ին

Արդէն հեռագրից ձեռ օրվայ կարեւոր գեղ-
քերը: Բայց չը գիտեմ որչափ շուտ կը ստանա
հեռագիրը, նախ այն պատճառով, որ հեռագրի-
ների ահապին կատարում կայ, և երկրորդ այն,
որ զգուշութիւններ են ձեռք առնված, որ
Պարսկաստանի զանազան քաղաքներում որչափ
կարելի է այդ լուրը չը տարածվի, և տեղիք չը
տալ խռովութիւններին:

Երկրի մէջ կարգապահութիւնը մինչև այս րօ-
պէն կատարեալ է: Պարսից պատմութեան վեր-
ջին դարերի մէջ տեսնված չէ, որ երկրի թա-
գաւորը մեռնի, այն էլ այսպիսի ոճագործու-
թեան գոհ, և երկրից այսպէս խաղաղ մնա-
նալու է, որ այդ բոլորի մէջ անապին. դեր
խաղաց ներկայ սաղաղաւոր աշխրջութիւնը և
բօյեական վճռականութիւնը, բայց պէտք է
խոստովանվել և այն, որ իրերի այս վիճակը
արդեւք է նաեւ երկրի ներքին քաղաքական
հանդամանքներին: Նասրէդդին Դանիս թագա-
ւորութեան կէս դարի ընթացքում Դանիս իշխանու-
թիւնը իր լուծի տակ խոնարհեցրեց այն բոլոր
այսպէս ասած աւատական իշխաններին, որոնք
ամեն առիթից օգուտ էին քաղում ապստամբու-
թեան պատճառով: Դանիս արագաւ համար
ջօրաւոր ցեղերի գլուխները, որոնք Ֆարսի Դանիս
Մէհմէդ Դանիս ժամանակ իրանց նկատում էին
որպէս կէս թագաւորներ, այժմ բոլորովին են-
թաւրկված են կենտրոնական իշխանութեան
հրամաններին: Դրա հետ միասին ամենքը միա-

նպատակներ տալու պատճառով. ներքև ապագիկ-
ները պարտական վարչութեան, թագաւորական,
կաթնէտային, կայսրուհի Մարիայի հիւանդանոց-
ներում բժշկութիւն և ապաստան տալու համար,
չառնել աղետակներին և նրանց փրկելու համար,
ապագիկները թոշակաւորներ պահելու համար,
ապագիկները և կաթնէտային կալուածները
պահպանելու զանազան պահանջներով. դիւրու-
թիւններ տալ անձինքներին, հասարակութիւն-
ներին և դասակարգներին արած փոխառութիւն-
ները վերադարձնելու ժամանակ. ներքև այն ան-
ձանց, որոնք սեփականացրել կամ վատնել են
ծառայութեան մէջ՝ նրանց յանձնված գոյքերը
ոչ բարձր 1000 ռուբլուց, եթէ սեփականացրածը
ամբողջապէս վերադարձրել են. աղատել դա-
տաստանից և պատժել այն անձանց, որոնք
193, 194, 1575 յօդուածներում յիշատակված
յանցանքներն են գործել. աւելի մեծ յանցանքներ
գործած անձանց վերաբերութեամբ, որոնց դա-
տարանը դատաւարտել է կալանաւորման բան-
տում կամ բերդում, առանց զրկելու մի քանի
առանձին իրաւունքներից և արտօնութիւններից,
պակասացնել բանտարկութեան ժամանակամի-
ջոցը 2/3-ով, այն պաշտօնական անձանց համար,
որոնք ենթարկվել են պատժի օրէնսդրութեան
65 յօդուածի 2-ից մինչև 9 կէտերի համեմատ,
այդ պատժները արգելք չը պէտք է լինեն ծա-
ռայութիւնը շարունակելու, թոշակ և պարգևներ
ստանալու, բացի անբժ ծառայութեան պարգևը
և ս. Վլադիմիրի յիշանալը. մինչև 1886 թ.ի
յուլիսի 12-ի օրէնքը կապածի կամ մեծ կասկա-
ծի տակ եղող բոլոր անձանց ազատել հետեւնե-
րից. ազատել դատաստանից և պատժից այն
անձանց, որոնք գործել են վոյստաների դատա-
րաններին ենթակայ յանցանքներ, որոնց դէմ
հալածանք չէ սկսվել կամ վճիռ չէ կայացել,
կամ վճիռ չէ իրագործվել, կամ որոնք կրում են
դատարանի կայացրած պատժները: Այդ չնորհ-
ները չեն վայելում այն անձինք, որոնք գողու-
թիւն են արել, խարդախութիւն են գործել,
իւրացրել, վատնել են իրանց յանձնված գոյքը,
որոնք վախճառութեամբ, կաշառակերութեամբ
և զոյաբանութեամբ են պարտաւել, անդրուշտ-
ութեամբ մտահալացել են, պատժի դէմ յանցանք
են գործել, որոնք մարմնական անբարեբաւելու-
թեան կամ առողջութեան դէմ են գործել, որոնք
բանտարկութեան պիտի ենթարկվէին՝ ծառայու-
թիւնից արձակվելու, կամ այնպիսի պատժներ-
կրելու փոխանակ, որ սահմանափակում են իրա-
ւունքները, նոյնպէս և այնպիսի գործերի համար,

Ոճրագործը, որքան որ ճանաչված է, մի ժա-
մանակ անձնական ապաստան է. եղած հանրա-
ծանօթ Շէյնը չէ՞մալ-էդ-դին: Երբ Շէյնը պար-
սից կառավարութեան հրամանով արտաքսվում
է Քէնթաին, այդ մարդն էլ ձերբակալվում է,
զրկւում զանազան և փոխառութիւններից,
որից յետոյ ոճրագործը երկու տարի
զաղկիւնում բանտարկվում է: Այս հանգամանքը,
նաև այն, որ Շէյնը չէ՞մալ-էդ-դին վերին աստի-
ճանի ինտրիգան և խիզախ մարդ է, տեղի է
տուել անհամար ենթադրութիւններին, որ ես
հաղորդում եմ վերապահութեամբ: Շէյնը այժմ
էլ գտնվում է Վոսթորի ամբարանում, ամսական
150 լիւրա ուժեղիով և սուլթանի յարգելի հիւրն
է: Պարսից կառավարութիւնը շատ անգամներ
բողոքել է այն հիւրընկալութեան մասին, որ
չնորսվում է այսպիսի մի մարդու, և վեր-
ջին ժամանակներս, ինչպէս լուրում է, այդ Շէյ-
նի սահմանադրութիւնը բաւական անախորժ բա-
նակցութիւնների առիթ է տուել երկու կառա-
վարութիւնների մէջ: Թէ իսկապէս ինչ կապ
կայ Շէյնը չէ՞մալ-էդ-դին և այս ոճրագործի, իր
նախկին Վոսթորի (աշակերտի) մէջ, դա ղեռ
ևս յայտնի չէ, բայց բնական է, որ այսպիսի
պարագայում ամեն մարդ մի կապ տեսնէ այդ
բողոքի մէջ, քանի որ չը կայ մի ակնյայտի
նպատակ, որի համար սպանութիւնը գործված
լինի:

Գալով Պարսկաստանի հայերին, նրանք մի
ընդհանուր ցաւով համակված են: Եւ իսկապէս
Նասրէդդին Շահը հայերի պաշտպան և բարե-
կամ մի թագաւոր էր: Ոչ ոքի համար դադ-
տել չէ, որ Շահի կառավարութիւնը շատ աղ-
ղու միջոցներ ձեռք առաւ թիւրք-պարսկական
սահմաններում բնակվող հայերին թիւրքիայի
բերդերի ասպատակութիւնից ազատ պահելու

որոնց պատճառով դրամական տուգանքները տըր-
վում են ոչ յօգուտ զանձարանի, ուղէի, պաշա-
տական վարչութեան և ոչ էլ մտնում են բան-
տարկութեան տեղեր կառուցանելու յատկացրած
և միւսիկ անուանված դրամադրութիւնների մէջ:
Պակասացնել 1/3-ով այն յանցաւորների պատժը,
որոնք ենթակայ են բանտարկութեան կալանաւոր-
ների տան մէջ, բերդում կամ բանտում, զրկելով
առանձին կամ մի քանի իրաւունքներից: Այն
պաշտօնական անձանց, որոնք արտաքսված են
ծառայութիւնից ոչ շահաւէր կամ անձնական
նկատումներով կատարած յանցանքների համար,
հրաժարված համարել ծառայութիւնից: Այդ չնոր-
հը տարածվում է այն պաշտօնական անձանց
վրա, որոնք դատաւարտված են ժամանակաւոր
բանտարկութեան՝ բերդում և բանտարկութիւնից
ազատված և տեղական ոստիկանութեան հսկո-
ւթիւնի տակ զրկող անձանց ժամանակամիջոցը
կրճատել 1/3-ով: Այնպիսի յանցանք գործողներին,
որոնց համար նրանք ենթակայ են արտօնի Սիբիր
կամ հեռաւոր նահանգները, չնորհել՝ հեռաւոր
նահանգները արտօնվածների համար—10 տա-
րուց յետոյ, իսկ Սիբիր արտօնվածների համար—
12 տարուց յետոյ, բնակութեան իրաւունքը Եւ-
րոպական և Արիական Ռուսաստանում, բացի
մայրաքաղաքներից և մայրաքաղաքների նահանգ-
ներից, առանց վերականգնելու իրաւունքները:
Սիբիր կամ հեռաւոր նահանգները արտօնված-
ները, որոնք բանտարկված են կամ իրաւունք
չունեն հեռանալ իրանց տեղերից, արտօնի ժա-
մանակամիջոցը կրճատվում է 1/3-ով: Այսպիսի
14 տարուց ոչ պակաս միացողներին թոյլ տալ
բնակութեան տեղը ընտրել, բացի մայրաքաղաք-
ներից, զինելով նրանց 5 տարի հակողութեան
տակ, և ընդունել նրանց զրկված առանձին
իրաւունքներից, փոխանակ բոլոր իրաւունքների,
առանց իրաւունք ունենալու գոյք ձեռք բերել:
Ցածանակիր աշխատանքներին դատաւարտված-
ների ժամանակամիջոցը կրճատել 1/3-ով, ցած-
տանակիր աշխատանքները փոխարինել 12
տարվայ տաժանակիր աշխատանքներով: Այդ
չնորհները վայելում են այն անձինք, որոնք
պատժ են կրել Բարձրագոյն հրամանով, փո-
խանակ դատարանի որոշած աւելի խիստ պա-
տժների: Այն անձանց, որոնք թիկնութիւններ
են տրված նորարդ մանիֆէստներով, հետեւեալ
արտօնութիւնները տալ.—ժամանակաւոր բան-
տարկութեան կամ բնակութեան համար նշա-
նակված տեղից անպայման չը բացակայելուն
դատաւարտվածների պատժը՝ կրճատել մէկ
բերդրականով: Սիբիր կամ հեռաւոր նահանգ-

համար—Նա թոշակներ էր որոշել Պարսկաստանի
բոլոր հայաբնակ քաղաքների ուսումնարանների
համար, և միշտ մի տեսակ համակրական վար-
վողութիւն ունէր իր հայ հայաբնակների հետ:
Նոյնը կարելի է ասել նաև սաղաքաւոր մասին,
և նոյնը վստահաբար կարելի է յուսալ Նոր Շա-
հից:

Սահակ վարդապետ Արևտեան չնորհաւորած
լինելով Նոր Շահի զահակալութիւնը և հանգու-
ցեալ Շահի մասին բոլոր պարսկահայերի կող-
մից ցաւակցութիւն յայտնած լինելով Նորին
Վեհափառութեան, իբրև պատասխան ստացաւ
սաղաքաւորից հետեւեալ նամակը:

«Ձեր հեռագրած արեւսադիրը առ Նո-
րին կայսերական Վեհափառութիւն Շահն-
շահը, որի թագաւորութիւնը Աստուած յա-
րատն անէ, Նորա բարձր նկատաւորութեան
արժանացաւ: Նորին Վեհափառութիւնը
ինձ հրամայեց, որ Նորա կայսերական
բարձր գահաւարտութիւնը ձեր արտայայ-
տած անկեղծ զգացումների մասին յայտ-
նեմ Ձերոյ Գերազատութեան և հայ աղ-
ղին: Այնքան է որ հայ աղղի հանգստու-
թեան և բարօրութեան համար Նորին
կայսերական Վեհափառութեան կողմից ա-
մեն հարկ եղած հոգածութիւնը ի գործ
էլ զրկվաւ:

21 Ձեռնագր, Սաղաքաւոր
1313

III
Թէ հրաւիր, ասորիւն 29-ին
Հրամանաւ Վեհափառ. կաթողիկոսի, երէկ
Թէ հրաւիր հայոց ս. Գեորգ եկեղեցու մէջ մի
պաշտօն կատարվեց ի յիշատակ հանդուցեալ
Նասրէդդին Շահի: Արևտեան վարդապետն ինքը
պատարագիւ էր. ներկայ էին, բացի հայերի ա-

նեքը արտօնվածներին, 1894 թ.ի մանիֆէստով
արտօնից ազատելուց յետոյ, թողարկել անցա-
ղիկներ ստանալ, առանց յիշելու «արտօնված-
ներին». 1894 թ.ի նոյեմբերի 14-ի մանիֆէստի
4-րդ յօդուածի 13-րդ կէտի հիման վրա՝ արտօնու-
թիւնների իրաւունքը ստացած անձանց արտօնի
ժամանակամիջոցը կրճատել մի տարով. դիւրա-
կան չըլնալ մտնելու իրաւունք ձեռք բերած ար-
տօնականներին թոյլ տալ քաղաքային մէշանսե-
րի հասարակութիւնների չըլնալ մտնել Սիբի-
րում, առանց իրաւունք ունենալու Եւրոպական
Ռուսաստան գնալ, մինչև որ թոյլտուութիւն չը
լինի այն կարգով, որ սրոյված է 1894 թ.ի մա-
նիֆէստով. իսկ 1894 թ.ի մանիֆէստի 4-րդ յո-
դուածի 13-րդ կէտի հիման վրա արտօնութիւն-
ների իրաւունք ձեռք բերողների Սիբիր մնալու
ժամանակամիջոցը՝ կրճատել մէկ տարով: Ցածա-
նակիր արտօնվածների աշխատանքի ժամանակը
կարճացնել մի տարով: Ուղղիւ բաժանմունքների
տաժանակիր կալանաւորներին, արտօնվածնե-
րին, բնակութեան համար արտօնվածներին և
բանտարկութեան մէջ գտնվող արտօնվածներին
չնորհված արտօնութիւնները չեն սահմանափա-
կում 1894 թ.ի մայիսի 7-ի և 1895 թ.ի մայի-
սի 9-ի մանիֆէստներով ժամանակամիջոցը կըր-
ճատելու և արտօնութիւնների վրա ունեցած ի-
րաւունքները և Սիբիրի երկաթուղիների կառուցա-
նելու կանոնները: Չորս տարուց ոչ պակաս ժա-
մանակամիջոցով տաժանակիր աշխատանքներին
դատաւարտված կամ դատաւարտվող անչափա-
հաններին՝ տաժանակիր աշխատանքներից ազա-
տել, հաշվելով դրանց արտօնվածների թիւում:
Այն յանցանքները, որոնց դէմ այս մանիֆէստի
հիման վրա հալածանք չէ դադարում և որոնք
գործված են մինչև թագաւորութիւնը, պակասեց-
նել վաղեմութիւնը մի երրորդականով: Արտօ-
նութիւնների գործադրութիւնը թողնել արդարա-
դատութեան մինիստրին, իրկուստիկ և Պրիա-
մուրեան գեներալ-նահանգապետներին, երբ կը
հաւատարման, որ դատաւարտեալները բարի
վարը ունեն: Այն անձանց, որոնք ապօրէն գոր-
ծողութիւնների համար ենթակայ են դրամական
տուգանքի վարչական ձեռք, ազատել պահան-
ջից մինչև 300 ռուբլի: Ազատել պահանջից,
քննութիւնների և գաղտից զինուորագրութիւնից
փակվող անձանց, եթէ նրանք եկել են մին-
չև թագաւորութեան օրը կամ կը գան մի
տարվայ ընթացքում: Թափառաշրջկութեան հա-
մար դատաւարտվածներին, այն դէպքում, երբ
նրանք կը յայտնեն իրանց կոչումը, թոյլ տալ
վերադառնալ իրանց հասարակութեան մէջ:

հազին բազմութիւնից, նաև եւրոպական գաղ-
թականութիւնից մի քանի նշանաւոր մարդիկ,
կառավարութեան կողմից յատուկ մի պաշտօ-
նեայ ուղարկված էր պատարագին ներկայ գը-
տնվելու, որ եկած էր համազգեստով և չբանչան-
ներով, կային նաև ուրիշ աստիճանաւոր պարսիկ-
ներ, որոնք թէև չէին հրաւիրված, բայց լսելով
որ մի աչքալին պաշտօն պիտի կատարվի հայոց
եկեղեցում, աճապարել էին ներկայ գտնվել:
Եկեղեցին և բազմ պալատի ծաղիկներով և սև
շղարչներով զարդարված էին:

Հայր Արևտեան մի կարճ քարոզով յայտնեց,
թէ ինչ պարտականութիւններ ունեն հայերը
դէպի հանդուցեալ Շահի յիշատակը, որը յի-
սուն տարվայ ընթացքում ամեն տեսակ հայրա-
կան հոգածութիւն չը խնայեց իր իշխանութեան
տակ վիճակված հայերից, յետոյ բարեմաղթութեան
ներ արաւ. ներկայ Շահի համար ժամերգութեան
աւարտումից յետոյ, առաջնորդարանի զահի-
ճում ընդունելութիւն տեղի ունեցաւ, այն ինչ
զինուորական երաժշտութիւնը նուագում էր
թաղման մարչեր, հանդէսը մեծ տաւառութիւն
թողեց և շատերը զգածված էին:

Հայերը ամեն կողմերից ցաւակցութեան հե-
ռագիրներ են ուղղել Վեհափառ Շահին, ի միջի
այլոց Վիճառայի, Աստարխանի, Բագուի, Եդիս-
տուի, Գաբանի (Հնդկաստան), և ուրիշ տեղերի
հայերը: Նոյնպէս համակրական հեռագիրներ փո-
խանակվեցան Նոր Շահի և Վեհափառ. կաթո-
ղիկոսի միջև, հայոց այս ընդհանուր ցաւակցու-
թիւնը ունի շատ մեծ նշանակութիւն, մանա-
ւանդ ներկայ պարագաների մէջ:

Սըր Մօրթիմըր Գիւբանը, Անգլիայի ղեկավարը,
թագուհու կողմից մի պատկ զրեց Նասրէդդին
Շահի դադաղի վրա: Մարմինը ղեռ ևս պահ-
ված է պալատին կից մի չնքի մէջ, ուր ամեն

վարչական կարգով կամ հասարակական վճռով
Սիբիր արտօնվող անձանց, որոնց հասարակու-
թիւնը չէ ընդունում պատիժը կրելուց յետոյ,
թոյլ տալ 3 տարուց յետոյ անցնել ուրիշ նա-
հանգները և հասարակութիւնները, եթէ նրանք
լաւ վարը ունենան: Պետական յանցանք գործած
անձանց մասին, որոնք իրանց յանցանքի յատկու-
թեան կամ փոշմանելու պատճառով արժանի են
ներդրամտութեան, թոյլ տալ ներքին գործերի
մինիստրին միջնորդել, նոյնպէս և Բարձրագոյն
հայեցողութեան ներկայացնել այն արտօնվածնե-
րի ծագումի նախկին իրաւունքները վերականգ-
նելու մասին, որոնք Սիբիրում պարտաւորիչ
կերպով մնալուց յետոյ, աչքի էին ընկնում ի-
րանց անբժ և աշխատաւոր կեանքով: Ներքին
գործերի մինիստրին թոյլ տալ միջնորդել այն
անձանց վերաբերմամբ, որոնք պետական յան-
ցանքների համար պատժ են կրում վարչական
կարգով: Նոյնպէս ազատել բնակութիւն հաստա-
տելու արգելից այն անձանց, որոնց վերադարձը
հակառակ չէ հասարակական կարգին: Պետական
յանցանքներին վերաբերեալ գործերը, որոնք
ենթակայ չեն վաղեմութեան և որոնք 15 տարի
շարունակ ծածուկ էին, մուսադմութեան տալ:
Այն յանցանքների վերաբերեալ գործերը, որոնք
նախատեսված են 246-ից մինչև 248 յօդուած-
ներում, և որոնք ծածուկ էին մնում, մուսադմ-
ութեան տալ: Այդ յանցանքների համար մեղադր-
վող կամ պատիժը կրող անձանց ազատել՝ բոլոր
հետեւանքներով: Թոյլ տալ ներքին գործերի մի-
նիստրին՝ պետական յանցանքներ գործելու
պատճառով հայրենիքը ինքնակամ թողած անձանց
միջնորդութիւնը ներկայացնել, եթէ նրանք չեն
մեղադրվում 241-րդ յօդուածում յիշած չարագոր-
ծութիւնների մէջ: Լեհաստանի թագաւորութիւն-
նից և Արևմտեան նահանգներից գաղթածներին,
որոնք լեհական ապստամբութեանը նպաստե-
լու համար սպանութիւններ, կողոպտումներ և
հրդեհաձգութիւններ չեն արել, չենթարկել ոս-
տիկանութեան հակողութեանը և թոյլ տալ ազատ
բնակութիւն, երբ նրանք հայրենիք կը վերա-
դառնան և երբում կընդունեն. իսկ նրանց,
որոնք ապստամբութեան նպատակու համար
վերոյիշեալ ջրեական յանցանքներից մէկը կատա-
րել են, հալածանքի չենթարկել, զինելով նրանց
ոստիկանութեան հակողութեան տակ՝ 3 տարով:

ԹԱՅԱԿՐՈՒԹԵԱՆ ՏՕՆԱԽԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ ԹԻՖԼԻ-
ՍՈՒՄ

Մայիսի 14-ը, Նոյն կայսերական Մեծու-
թիւնների թագաւորութիւնը՝ կովկասի մայրաքա-

օր կատարվում են կրօնական արարողութիւններ:
Ղաջարների թագաւորելուց ի վեր, սա առաջին
անգամն է, որ մեծնող թագաւորի մարմինը ար-
ժանանում է պաշտօնական ծէսերի և թաղման
պատիւներին: Բաղարների մէջ հրապարակով կա-
տարվում են, պէտք է ասել ինքնաբերաբար, հա-
տարկութեան զանազան դատաւարների կողմից
սուգի արարողութիւններ: Այդ նշան է ասելի
բարեգործած բարեբեր:

Մուգաֆֆէ-էդ-դին Շահը ղեռ ևս թաւրիդ է.
մայիսի սկիզբը ճանապարհ կընկնի դէպի Թէհ-
րան, ահազին բազմութիւն հեծելազօրք և հե-
տեւաներ ուղարկվում են Նորին Վեհափառու-
թեան ընկերանալու համար դէպի մայրաքա-
ղաքը:

Արքայապստան ոճրագործը ղեռ ևս պահան-
վում է ինամելով: Լուր կայ, որպէս թէ Շահը
հրամայած է նրա հետ լաւ վարելու, մինչև որ
ինքը Թէհրան հասնի. ոչ մի ուրիշ ձերբակալու-
թիւն չէ կատարված, որովհետեւ հիմունքներ չը
կան: Հակառակ տարածված և մինչև անգամ Եւ-
րոպայում արձագանք գտած լուրերի՝ ոճրագործը
մեղաակիցների ամուսն չէ ստուած:

Շահը իր պաշտօնի մէջ վերահաստատած է
սաղաքաւոր, ի մեծ ուրախութիւն բոլորի. նոյն-
պէս և վճռած է մի գոհարաչէն սուր ուղարկել
իր եղբայր Զէլլը-Սուլթանին, որ Սպանիայի կա-
ռավարել է: Նոյնը չէ կարելի ասել Նայրե-
տալթանի մասին, որ զինուորական մինիստր և
այս Շահի փոքր եղբայրն է, նրա պաշտօնը յանձն-
ված է ուրիշի, թէև ոչ զինուորական մինիստ-
րութեան տիտղոսով: Մայրաքաղաքի պահպա-
նութեան և ապահովութեան գործը յանձնված
է ուսու պոլիցիէի կոստագոյնով:

Բաղրատունի

վճռով Թիֆլիսում առնվեց մեծ չորս: Վաղ առաւօտից արդէն ազգաբնակիւթիւնը չարժան մէջ էր: Քաղաքի գլխաւոր փողոցում նշանաւոր տներն ու խանութները զարդարված էին մեծ չքեղութեամբ: Թէ Սիմի մայր-եկեղեցում, թէ հայոց վանքի մայր-եկեղեցում և թէ ուրիշ գաւառական տաճարներում տեղի ունեցան հանդիսաւոր ժամերգութիւններ: Ժամը մօտ 12-ին, կովկասեան կառավարչապետի օգնական կոմս Տատիշչեւ ատացաւ զինուորական մինիստր վան-նովսկոյ հետեւեալ հեռագիրը. «Նոյցա կայսերական Մեծութիւնների սրբազան թագաւորութիւնը կատարվեց: Նոյն բովանդակութեան հեռագիր ատացաւ ներքին գործերի մինիստր Գորնոմիլինից Թիֆլիսի նախագահաւոր իշխան Շեր-վաչիձէ: Ամիջապէս այդ մասին քաղաքի ազգաբնակչութեան հաղորդվեց թիւղանօթաձուլութեամբ, երեք անգամ, իսկոյն քաղաքը զարդարվեց դրօշակներով և բոլոր տաճարներում կատարվեցան դոհացողական մարթնանքներ:

Երեկոյեան ժամը 6-ից արդէն քաղաքի զինաւոր փողոցներում սկսվեց մի արտասովոր շարժում: Գլխաւորապէս փողոցում կառքերի երթիկները դադարեց: Ժամը 8-ին ամբողջ քաղաքը լուսաւորված էր անթիւ լաւաւորներով: Մի քանի հինգերորդականներ, ինչպէս քաղաքային ժողովը կովկասեան շտաբը, Թիֆլիսի փողոցային շրջանները զարդարեց, Ռուսացական ինստիտուտը, Գլխաւորապէս փողոցի, Գլխաւորապէս պրօպագանդայի, և Միջազգային փողոցի գլխաւոր խանութները մեծ ճաշակով զարդարված էին: Միտաձմեռային և Արսենալի սարերի վրա գեղեցիկ հրախալ տեղի ունեցան: Հաղարատու ամբարը փողոցներում պատում էր մինչև գիշերվալ ժամը 12-ը, մասնաւոր ուր հրաշալի լուսանկար գիշեր էր և մայիսեան գեղեցիկ եղանակ: Ժամը 12-ին, երբ արդէն փողոցները քաշված էր՝ սկսվեց յորդանիսը, որը տեղի մի քանի ժամ:

Մայիսի 15-ին նորից սկսվեց գեղեցիկ եղանակ: Առաւօտեան ժամը 10-ին խնկերները ուսումնարանի մօտ դառնալով մեծ հրապարակի վրա կատարվեց դոհացողական մարթնանք, որից յետոյ տեղի ունեցան զօրանանդեւ, մասնակցում էին Թիֆլիսում գտնվող բոլոր զօրքերի բաժինները: Գլխաւոր հրամանատարն էր կոմս Տատիշչեւ: Միջազգային փողոցով կառքերի և ձիաքարշի երթիկներով զարդարեցրած էր, որպէս զի զօրքերի բազմաթիւ վաշտերը և հանդէսին նայել ցանկացող անգլիսի բազմութիւնը կարողանան ազատ շարժել: Զօրանանդեւ փերջացաւ ժամը 12-ին: Կառավարչապետի օգնական կոմս Տատիշչեւ այնտեղից գնաց Ալեքսանդրեան այգին, որ կայսերական սրբապետի մինիստրութեան կողմից ճաշ էր պատրաստված 3,000 ջրաւորների համար: Ալեքսանդրեան այգու ծառայողներում տարածված էին երկար սովորակ սփռոցներ, որոնց երկու կողմին ծաղկապսակի նստած էին ամեն աղքատ պատկանող աղքատներ, իւրաքանչիւրի առաջ դրված էր մի շին գինի, հաց, խաչած միս, կարմիր ձու, կանաչի և մի մի հատ սովորակ անհեռոյկ: Աղքատների մեծ մասը տեղացիներ էին, կային և բաւական թուով թիւրքահայ կանայք և երկխաններ: Այդուհետ ուսումնականները կատարեց դոհացողական մարթնանք, ներկայ էին կոմս Տատիշչեւ, Թիֆլիսի նախագահաւոր իշխան Շերվաչիձէ, համբարները իրանց դրօշակներով: Կոմս Տատիշչեւ վերջնելով մի բաժակ գինի, բարձր ձայնով հնորհաւորեց տօնը և խմեց թագաւոր կայսրի կենացը: Բոլոր ճաշողները ուրաներով և ծափահարութիւններով ընդունեցին այդ կենացը: Նուազում էին երաժշտական երկու խմբեր և տեղական դուռնան:

ՆԱՄԱԿ ԱՍՏԻՍԱԿԻՅ

Մայիսի 7-ին

Մայիսի 4-ին, երեկոյեան 8 ժամ 30 րոպէին, տեղի ունեցաւ հետեւեալ եղեռնագործութիւնը: Մի յայտնի բարձր աստիճանաւոր խանութն է մտնում մի պարսիկ և մի քանի քայլ մօտենալով հանում է ասորճանակ և պարզում ասորափի վրա, գնտակը ծակում է միայն ասորափի թեւը: Զարագործ տեսնելով, որ չը կարողացաւ մահացու վէրք տալ կամ սպանել, իսկոյն հանում է սօբը և յարձակվում ասորափի վրա: Այդ վայրկեանին ասորափի միւս ընկերը, որն այդտեղ էր գտնվում, ցատկում է և շարագործի

ետեղի երկու ձեռքերով պինդ սեղմում է իր կրծքին, բռնելով և շարագործի ձեռքերից: Զարագործը չէ կարողանում տեղից շարժվել: Այդ դրութեան մէջ մտած են մի քանի րոպէ, մինչև որ աղմուկի վրա հաւաքվում են ժողովուրդը և ոտականները: Խոկոյն կալանաւորում են շարագործին և տանում բանտը: Պատմում են, որ շարագործը մի քանի օր է ինչ եկել է Թաւրիզից և Պարսկաստանի զանազան քաղաքներում կատարել է մի քանի սպանութիւններ: Յիշեալ բարձրասի տարափի վրա յարձակվելը օմանը համարում են կրօնական ֆանատիկոսութեան հետեւանք, այդ գործը չուտով կը ընկնի դատաւանդում, հետեւանքի մասին կը հաղորդենք: Ամիս 6-ին, երեկոյեան ժամը մօտ 10-ին, արտասովոր մեծութեան կարկուտ եկաւ այստեղ:

ՆԱՄԱԿ ԽՄԻՍԱԳՐՈՒԹԱՆ

Գերբեմը, մայիսի 1-ին

Խնդրեմ իմ այս քանի մի տողը դետեղեք «Մըշակի» էջերում:

Գուցէ ընթերցողները յիշեն, որ իմ հանգուցեալ ամուսին՝ Գեորգ Մէլիք-Շահնազարեան Գե-Շափուրը բանաստեղծ էր կտակել էր զանազան բարեգործական նպատակների համար 5,000 ռ., որի մասին յայտարարված էր նոյնպէս և «НОВОЕ ОБОЗРЕНИЕ» լրագրում: Կտակված գումարը բաժանված էր այսպէս.— Էջմիածնի օգտին՝ 1,000 ռ., Գեորգեան ձեռնարկին՝ 1,000 ռ., Ներսիսեան դպրոցին՝ 2,000 ռ., Գերբեմի ու Ամենա-փրկիչ եկեղեցուն՝ 500 ռ., Գերբեմի հայ աղքատներին՝ 200 ռ., մանկական չքաւորներին՝ 100 ռ., հրեայ չքաւորներին՝ 100 ռ., ռուս չքաւորներին՝ 50 ռ., Գերբեմի ձրի բուժարանին՝ 50 ռ.: Հանգուցեալը կտակը սուրբ համարելով համաձայն նրա ցանկութեան, ճշգրտեամբ կատարելի գործակալ բանակալ Սպանդուկի աջակցութեամբ, և իրագործման մասին բոլոր վկայաթղթերը կան վերադիւնալը, ինչպէս եւ «НОВОЕ ОБОЗРЕНИЕ» լրագրին՝ արտատպել:

Այդի եկամտերին Մէլիք-Շահնազարեան Գե-Շափուր

ՆԵՐՍԻՍ ԼՈՒՐԵՐ

Մայիսի 14-ին, թագաւորութեան օրը, Թիֆլիսի հայոց ամենամեծ դպրոցի՝ Ներսիսեան դպրոցի աշակերտները ներկայ էին դոհացողական մարթնանքին վանքի մայր եկեղեցում: Մարթնանքից յետոյ հոգաբարձութիւնը ճաշկերպով կազմեց աշակերտների համար: Գլխաւոր աշակերտների մի մասը, այսօր, մայիսի 16-ին, ներկայ պէտք է լինի խնկերներին դպրոցի հրապարակում աշակերտական ընդհանուր հանդիսին, որին պէտք է մասնակցեն Թիֆլիսի բոլոր դպրոցների աշակերտները:

Էջմիածնի օրդան «Արարատ» ամսագրում կարդում ենք. «Վերջին ժամանակներս եւրօպական թերթերից ամանք մի անհիմն լուր հրատարակեցին, որ իբրեւ թէ ամենապատիւ ս. պատրիարքը ձգտում է միաբանութիւն հաստատել Հռօմի պապի հետ. պարտք ենք համարում հերքել այդ լուրը որպէս անտեղեակ մարդկանց մտքի ծնունդ: Այդպիսի միաբանութիւն հաստատելը Հայաստանեայց եկեղեցու կանոններով վեր է օր և է հոգևոր պետի իրաւասութիւնից և արբանդան իրմիրեանն այն անձն չէ, որ այդպիսի ձեռնարկութիւններ սկսէ: Հայրապետական Գիւլանը, որ անընդհատ յարաբերութիւն ունի Կ. Պոլսի պատրիարքարանի հետ, ոչ մի այդպիսի տեղեկութիւն չէ ստացել:»

Մօսկվայի համալսարանի պրօֆէսոր Ն. Զ. Լինսկի, շատ մանրակրկիտ փորձերից յետոյ, հասաւ նշանաւոր հետեւանքների նաւթի գոյան աւելում մասին: Ինչպէս յայտնի է, երկու տեսութիւն կայ այն մասին, թէ ինչ կերպ է գոյանում նաւթը: Մէկը, որ յայտնել է Լեօպոլդ ֆոն Բուլի, բացատրում է նաւթի կազմվելը զանազան կենդանիների մնացորդների քիմիական փոփոխութիւնով, միւսը, որի հեղինակն է պրօֆէսոր Մենդելեւ, նաւթի վրա նայում է իբրեւ անօրգանական հանքի փոփոխութեան վրա Պրօֆէսոր Զելլինսկու հետազոտութիւնները հաստատում են երկրորդ տեսութիւնը:

Ներսիսեան դպրոցի վերջին՝ վեցերորդ դասարանից այս տարի աւարտեցին 18 հոգի: Աւարտողներն են՝ Աւագեան Տիգրան, Ալիսանեան Իսահակ, Գրիգորեան Յովսէփ, Գիւնարեան Մովսէս, Եարալեան Տիգրան, Երզնկեան Եղեկիւն, Կիրակոսեան Սեդրակ, Գորիսապետեան Արշակ, Գահրիմանեան Մարտիրոս, Յովսէփեան Յովհաննէս, Պապովեան Ալեքսանդր, Սարգսեան Յակովբ, Սարեան Գրիգոր, Վարդապետեան Խաչատուր, Տէր-Մկրտչեան Սարգիս, և Քուրաղեան Տիգրան:

ՂԱՍԻՅ մեզ գրում են մայիսի 10-ից. «Երկու օր է մեզ մօտ հիւր է կարա-Մուրզան Հայոց երգեցողութեան աշխատաւոր մշակ կենդանութիւն է տուել մեր մեռած կենդին. ամենքը սիրով շտապում են մասնակցել գործին: Արդէն խուրը կազմված է մօտ 100 հոգուց և կարա-Մուրզան իր առաջին համերգը պատրաստում է թագաւորութեան հանդէսների համար: Լիայոյս ենք, որ զղարցիները կը գնահատեն երաժշտագէտի եռանդը և աշխատութիւնը իրանց այցելութեամբ: Մի կենդանութիւն նոյնպէս նըկատվում է և մեր սիրողների մէջ. առաջիկայ կիրակի օրը խաղալու են «Օրիորդ Բէրյեան», իսկ թագաւորութեան երեկոյն տալու են ռուսաց լեզուի ներկայացում:»

ԳՐՈՒՅ մեզ գրում են մայիսի 5-ից. «Եղանակը անձրեային է և ցուրտ. մայիսին դեռ ևս արևի երես չենք տեսել: Գետը յորդացել է, մասնաւոր լիակովան. ջուրը հասել է մինչև քաղաքային այգու բոստանը, բայց դեռ ևս տների և մարդկանց հետ դժբաղդութիւն չէ պատահել: Վերջին տեղեկութիւնները, տարաբաղդաբար, ցոյց են տալիս, որ մայիսի 11-ին հեղեղը մեծ չիսա տուց Գորիին և չըջականերին:

ԷՋՄԻԱՇՆԻՅ գրում են «Тифл. Листок» լրագրին, որ ամենայն հայոց կաթողիկոսի հրամանով սիրող նուիրել է Էջմիածնի վանքական գեանից մի կտոր, որի վրա պիտի յիշվի ռուսաց եկեղեցի: Մայիսի 9-ին ռուս հոգևորականութիւնը օծել է անկել է այդ տեղի վրա մի խաչ: Եկեղեցին պիտի յիշվի Նիկողայոս Աքան-չելագործի անունով՝ ի յիշատակ թագաւոր Կայսրի զահակաւորութեան և ամուսնութեան:

ԱՐՏԱԳԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՆՆԵՐ

Իշխանի գործակալութիւնը հաղորդում է Կ. Պոլսից մայիսի 16-ից հետեւալը. «Այն հանգամանքը, որ երկէ սուլթանը ընդունեց Ֆիշեյ կերբին միւս ղեկաւանների և մինիստրների հետ միասին, թէ և անդիական գեսալանին խոտացված էր առանձին ընդունելութիւն, դարձել է զանազան մեկնութիւնների առարկայ: Այնպէս են բացատրում, որ սուլթանը ցանկացել է խուսափել քաղաքական ընաւորութիւն կրող խօսակցութիւններից:»

Լճուղմի լրագիրներում կարդում ենք. «Եւթմանասուն երեք թիւը ուսանողներ, որոնք ուսանում են Կ. Պոլսի կիւլիկի դիւնաւորական դպրոցում, Բոսֆորի վրա, կալանաւորված են անյայտ պատճառով: Գալաթիայի հայոց դպրոցի երկու ուսանող՝ Վահրամ և Մարտիրոս՝ զատապարտված են տաճարական տաժանակի աշխատանքի, որովհետեւ իրանց մօտ ունեցել են զէլթունցիների օգնելու համար հանգանակութեան թերթեր: Պերայում նորերս տեղի ունեցաւ երեք մասնաւոր սպանութիւն. սպանվածներից մէկը մի աւատիկայի երիտասարդ կին է: Այս սպանութիւնները անհանգստութիւն են յարուցանում քրիստոնեաների չըջանում:»

Ազհիսարից հաղորդում են, որ այնտեղ սօֆթաների մէջ բացվել է մի նոր դատաւորութիւն՝ ուղղված տեղական հայերի դէմ: Բազմաթիւ սօֆթաներ ձերբակալված են և ուղարկված Կ. Պոլիս:

Երզնկայից հաղորդում են, որ Երզնկայի կենտրոնական իշխանութիւնը որոշել է ծանր պատմի ենթակարգել 55 հայի, որոնցից մէկը առաջնորդն է, միւսը քահանայ, որոնք կալանաւորված են վիշնայում «Լուսաւորութիւն»

ւորված են վերջին կոտորածների միջոցին: Մամուրեթ-էլ-Ալիդ նախագի Պալու քաղաքից հաղորդում են, որ հարկահան Բեշիք իր ուղեկից զափոխանելով փախցրել է քաղաքից հայ կանանց: Խաչ Հաւար գիւղում Թրեյֆուր մահ-մետականը իսկ է ամերիկական միսիոնարների ուղարկած փողի մի մասը:

Բրիտանական փոխ-հիւպատոս Ֆիցմորիս վերադառնում է Բերեջիկ՝ մասնակցելու այն յանձնաժողովին, որ պէտք է հետազօտի հայերի բռնի կրօնափոխութեան գործը:

Անգլիական նշանաւոր ազատամիտ գործող Ռեյնեամ Հարկուրտ խօսեց մի նոր աղեղնիկ ճառ, որի մէջ անցողակի կերպով չօչափեց հայոց խնդիրը: Եւս հաւատացած եմ, ասաց Հարկուրտ, որ իմ ունեղիւններից շատերի սիրտը ողորված է արիւնով հայկական կոտորածների առիթով: Ես մի քանի անգամ խօսեցել եմ այս առարկայի մասին, բայց պէտք է չեղեմ, որ ամենից ծանրը այն է անգլիական սրտի համար, որ լուրջ Սոյսերի առանձին ջանքով կատարվելու էր զայնապարով, որի մէջ մասնակցել չեն եւրօպական միւս պետութիւնները, Անգլիան վերցրեց Կիպրոս կղզին և պայմանաւորեց Թիւրքիայի հետ պաշտպանելու նրան փոքր-Ասիայում: Իսկ Թիւրքիան խոտացաւ մոյցնել ընթերցանքի և պաշտպանել հայերին: Այդ դաշնադրի հեղինակը այժմ բացատրում է Անգլիայի պատասխանատուութիւնը: Իսկ մենք մոռացած թէ այդ և թէ մեր սեփական տան դարձրելը, պատերազմ ենք ոկսում իդիպոտոսում:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՅ ԳՐՈՒԿԱԼՈՒԹԻՆՆԵՐ

ՄՈՍԿՎԱ, 13 մայիս: Մայիսի 12-ին Էրմիտաժի զաշխուստ տեղի ունեցաւ մեծ բանիւտ, որը ռուսաց մամուլի ներկայացուցիչները տուեցին արտասահմանեան մամուլի ներկայացուցիչներին: Հային ներկայ էին 250 մարդ, որոնցից 130-ը օտարերկրացիներ էին, իբրեւ ներկայացուցիչներ ամբողջ աշխարհի գլխաւոր լրագիրներին: Թէ և տեղերը որոշված չէին, բայց ռուսները նստեցին ֆրանսիացիների հետ: Հայը արտասովոր կենդանութիւն ունէր: Առաջին տուտը առաջարկեց Վ. Վ. Կոմարովը, Ռուսաստանի ինքնակալ Տանտրոյթ՝ Թագաւոր Կայսր Նիկոլայ II-ի կենացը: Բարձրագոյն «ուրան» հնչեց համաշխարհային մամուլի ներկայացուցիչների բնութիւնը: Ս. Ս. Սուլօրին առաջարկեց այն պետութիւնների գլխաւորներ կենացը, որտեղից մամուլի ներկայացուցիչներ են եկել Մոսկվա: Այդ տուտը նոյնպէս համակրութեամբ ողջունեց: Գրաւօսկի և Զապուլիսով առաջարկեցին մամուլի և նրա ներկայ եղող ներկայացուցիչների կենացը: Ապա Ֆրանսիական մամուլի ներկայացուցիչների փայլուն ճառերից և նշանաւոր հրապարակախօս Միշելից յետոյ, խօսեցին շատերը: Հայը և խօսակցութիւնները տեսեցին մինչև կէս գիշեր: Հայի նպատակն էր՝ օտեցնել և ծանօթացնել միմեանց հետ մամուլի գործողներին: Մամուլի ներկայացուցիչների ճաշը ամենքի վրա շատ լաւ տպաւորութիւն թողեց, մեծ աջողութիւն ունեցաւ և այսօր երկար խօսակցութիւնների առարկայ է դարձել: Հաւաքսանքից, «Journal des Debats» լրագրի աշխատակից Միշել մասնաւոր աղեղնայն օգնութեան վրա, որ ցոյց է տալիս մամուլին կայսերական պալատի մինիստրութիւնը: Պատասխանելով դրան, Վ. Ս. Կրիլենկօ ասաց, որ չինչքան էլ մեծ լինի Մոսկվայի համակրութեամբ, նա փոքր է համեմատելով այն աշխարհի հետ, որը հետեւում է այն բոլորին, ինչ կատարվում է Մոսկվայի մէջ: և անհնջ է դնում այն բանին, ինչ որ տեղի ունի Ռուսաստանի կենտրոնում: Մամուլի ներկայացուցիչները գրով, մատիտով և վրձնով հաղորդում են այն, ինչ որ կատարվում է:—Հաղարատներ տեսնում են, միլիոնաւոր մարդիկ կարում են: Այդ պատճառով մամուլը պէտք է լինի ճշմարտութեան պաշտպան. այդ ճշմարտութիւնը այժմ թագված է ռուս ժողովրդի սիրով մէջ դէպի իր պետը:—որ շնորհել է նրան Աստուած,—իբրեւ դէպի իր թանգագին ժողովրդի: Հօր: Այդ փախաղաք սիրող մէջն է թագված իշխանութեան և ժողովրդի միութիւնը, որը և տալիս է այն պիւր, որ ցոյց է տալիս Ռուսաստանը: «Figaro» լրագրի աշխատակից Գիւլ Լիւրու մի գեղեցիկ և սրամիտ ճառով առաջարկեց ռուս կնոջ կենացը: Յայտնի փառաբան Պելեակօ համեմատեց մամուլի գործունէութիւնը «Կարմիր խաչի» գործունէութեան հետ:—Նրա կոչումն է՝ ոչ թէ կուլել, այլ բուժել վերքերը, չը գրգռել կրքերը, այլ խաղաղեցնել կոտորելներն: Կա նրա սրբազան պարտքն է՝ ճառեր խօսեցնել գերմանացիները, անգլիացիները, ամերիկացիները, իսկ սլավոն հոեւորները՝ չեն կալալի, և բուկովինացի ռուս Գրիգոր Կուլագանի, որը հրատարակում է վիշնայում «Լուսաւորութիւն»

Մայիսի 4-ին, երեկոյեան 8 ժամ 30 րոպէին, տեղի ունեցաւ հետեւեալ եղեռնագործութիւնը: Մի յայտնի բարձր աստիճանաւոր խանութն է մտնում մի պարսիկ և մի քանի քայլ մօտենալով հանում է ասորճանակ և պարզում ասորափի վրա, գնտակը ծակում է միայն ասորափի թեւը: Զարագործ տեսնելով, որ չը կարողացաւ մահացու վէրք տալ կամ սպանել, իսկոյն հանում է սօբը և յարձակվում ասորափի վրա: Այդ վայրկեանին ասորափի միւս ընկերը, որն այդտեղ էր գտնվում, ցատկում է և շարագործի

